

Համայնքի ավագանու Ամանորի շնորհավորանքը

Հարգելի սևանցիներ,

Պատմություն է դառնում ևս մեկ տարի, որը մեզանից յուրաքանչյուրի և համայնքային կյանքում նշանավորվեց իրադարձություններով, ձեռնարկներով, մեծ ու փոքր հաջողություններով: Փորձեցինք տարին դարձնել հիշարժան, գործերով հագեցած: Ավագանին էլ համայնքի զարգացմանն ուղղված որոշումներով ստեղծեց լուրջ նախադրյալներ առաջընթացի և համայնքի բնականոնության ապահովման համար:

Առջևում 2012թվականն է՝ լի մտահղացումներով, ծրագրերով, կանխատեսումներով:

Վստահ ենք, որ մեր ցանկություններն ու նպատակներն նոր տարում կդառնան գործ յուրաքանչյուրիս աշխատանքի, սրտացավ վերաբերմունքի շնորհիվ:

Ցանկանում ենք, որ մեր համաքաղաքացիներն իրենց ձգտումներով ու նպատակասլացությամբ կկարողանան ստեղծել բարեկեցիկ կյանք իրենց և իրենց զավակների համար:

Մաղթում ենք, որ 2012թ-ը բոլորին պարգևի առողջություն և երջանկություն, սեր ու եռանդ, ստեղծի արժանապատիվ ապրելու հնարավորություն և պայմաններ:

Լավագույն ակնկալիքներով և լավատեսությամբ դիմավորենք Ամանորը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ: